

ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ

Ա. Ս. ԲԱԲԱՅԱՆ

XVIII դարի վերջերից և մասնավորապես XIX դարի սկզբներին Իտալիան աղղային վերածնունդ (ռիսորջիմենտո) ապրեց։ Ուժեղացավ աղղային-ազատագրական շարժումը։ Իտալական ժողովրդի մեջ արդեն հասունացել էր աղղային միասնության և բռնակալական լծից ազատագրվելու գաղափարը։ Այդ շրջանի համար հատկանշականը այն էր, որ մեծ հետաքրքրություն առաջացավ Դանտեի, մասնավորապես Դանտե-քաղաքացու շուրջը, որը առաջինն էր, որ տվել էր Իտալիայի միասնություն և ազատագրության միտքը։ Իտալական դրականության բաղմամբով առաջավոր ներկայացուցիչներ իրենց գլուխն էին խոնարհում Դանտե-քաղաքացու առաջ։ Ֆոսկոլոն «Աստվածային կատակերգության» իր նշանավոր մեկնաբանություններում Դանտեին համարում էր Իտալիայի միավորման և ազատագրության մարգարե։ Իտալիայի միացման և ազատագրության վերաբերյալ Դանտեի գաղափարները և առհասարակ նրա քաղաքական հայացքները ոգևորիչ և առաջնորդող դեր էին կատարում։ Կարելի է ասել, որ Դանտեն հարություն առավ և կանգնեց Իտալիայի ազատագրության համար մղվող մարտիկների կողքին։ Իտալիայի հայրենասերները, մասնավորապես ումանտիկ բանաստեղծներն ու գրողները, Դանտեի մեջ տեսնում էին Իտալիայի ազատագրության ու միավորման առաջին մարտիկին, ազատագրական շարժման գաղափարական ոգեշնչողին, իտալական ժողովրդի մեծ հայրենասերին, նրա հավատարիմ ղավակին ու պաշտպանին¹։ Իտալական հեղափոխական երգիչներից մեկը՝ Դ. Ռոսսետին, Դանտեին համարում էր անդամ առաջին կարբոնարի²։ Մինչև XIX դարի 70-ական թթ. Իտալիայի վերջնական ազատագրումը, Դանտեի քաղաքական հայացքները խանդավառել են իտալական ազատագրական շարժման մասնակիցներին և ումանտիկ գրողներին։ Ավստրիական բռնակալության դեմ ուղղված իտալական աղղային-ազատագրական շարժումները, անցյալ դարի առաջին կեսերից սկսած, աստիճանաբար լայն թափ ընդունեցին։ Մաձձինիի և Գարիբալդիի գլխավորած այդ պայքարը 1850-ական թթ. արդեն համաղղային բնույթ էր կրում։

Հայ ժողովուրդը, հատկապես նրա արևմտահայ հատվածը, որ տառապում էր և արյունաքամ էր լինում սուլթանական Թուրքիայի դաժան տիրապետության տակ, մեծ համակրանքով վերաբերվեց այդ շարժմանը։ Հայերը իտալացիների ճակատագրի մեջ տեսնում էին իրենց սեփական ճակատագիրը։ Երկու ժողովուրդների պատմական ճակատագրի ընդհանրությունը նշում էր նաև իտալական ռիսորջիմենտոյի շարժման ականավոր գործիչ, նշանավոր դանտեագետ, «Աստվածային կատակերգության» լավագույն մեկնաբանողներից

¹ Տե՛ս Дантовские чтения, М., 1968, էջ 75։

² Տե՛ս «История Италии», т. 2, М., 1970, էջ 500։

նիկուլո Թումազեան, որը Ազաթիանդեզոսի «Հայոց պատմության» իտալերեն թարգմանության (1843 թ.) առաջաբանում գրում է. «Մեր երկու ազգերը, որոնք երբեմն տիրողներ էին, հետագայում տիրվեցին և բաժան-բաժան եղան: Նրանք մի որոշ ժամանակ կորցրին նույնիսկ իրենց լեզվի անաղարտությունը, և այժմ տանջալի սիրով նորից ձեռք են բերում այն: Երանի թե Հայաստանի հին հիշատակարանների այս թարգմանությունները սիրո նոր կապ հաստատեն իրարից հեռու, բայց հավատով ու վշտով համանման քույր ժողովուրդների միջև»:

Իտալական ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները, Գարիբալդիի և Մաձձինիի հեղափոխական գործունեությունը լայն արձագանք գտան հայ մամուլում: Փարիզում, Վենետիկում, Մոսկվայում և այլ քաղաքներում հրատարակվող հայ պարբերականները 1850—1860-ական թթ. ջերմ հոգվածներ ու առաջնորդները են տպագրել իտալական ազատագրական շարժումների, Գարիբալդիի ազատագրական կռիվների մասին: Հայ պարբերականներում տպագրվել են Գարիբալդիի բոցաշունչ կոչերը՝ ուղղված Բրեշայի քաղաքացի-ներին, Սիցիլիայի ապստամբներին և այլն: Հայ պարբերական մամուլը բացահայտորեն հանգեւ էր գալիս իտալական ազատագրական շարժումների, Գարիբալդիի և գարիբալդիականների մղած հերոսական պայքարի հաղթական ավարտի ջերմ պաշտպանի դերում: Այդ ժամանակներում տպագրված առաջնորդողներն ու հոգվածները՝ նվիրված Գարիբալդիի ու գարիբալդիականների զորամասերի ազատագրական արշավների նկարագրությանը, գրված էին այնպիսի շնչով, որը միաժամանակ բորբոքում էր աշեմտահայ երիտասարդության հայրենասիրական ղգացմունքները և ոգևորում նրանց ազատասիրական գաղափարներով:

Իտալական ազատագրական շարժումների ղեկավարներից գլխավորապես Գարիբալդիի կերպարը հայ ժողովրդի ազատագրության գաղափարի խորհրդանիշն է եղել: Նրա հերոսական պայքարով ոգևորվել է հայ ժողովուրդը: Իդուր չէ, որ նրա կենսագրությունը տպագրվել է հայ մամուլում դեռևս 1855 թ. Այնուհետև առանձին գրքերով հրատարակվել են Իտալիայի «մեծ ազատարարի» կյանքի ու գործունեության վերաբերյալ տարբեր հեղինակների գործերը, իսկ 1895 թ. Լոնդոնում «Ժողովրդական գրադարան» մատենաշարով հրատարակվել է վավերագրական վկայությունների և անտիպ հիշողությունների հիման վրա գրված Գարիբալդիի կյանքի պատմությանը վերաբերող գրքի իտալերենից կատարված թարգմանությունը: Դրքի հայ թարգմանիչը առաջաբանում գրում է, որ մինչև Իտալիայի ազատագրումը իտալական ժողովուրդը գտնվում էր նույնպիսի ծանր ու դժան պայմաններում, ինչպիսի պայմաններում ապրում էր այդ ժամանակ հայ ժողովուրդը, տառապելով թուրքական լծի տակ: Այնուհետև նա նշում է, որ հայկական տագնապալի իրականության մեջ շատ ժամանակին ու նպատակահարմար է ազատագրության համար մղվող պայքարի միևնույն վիճակի մեջ գտնվող հայ ժողովրդի ձեռքը տալ Գարիբալդիի կյանքի ու գործունեության մասին պատմող այդ գիրքը:

Առաջադեմ հայ գործիչներից ու հրապարակախոսներից առաջին հերթին հեղափոխական-դեմոկրատ Միք. Նալբանդյանը ատելությամբ էր լցված ավստրիական բռնակալության դեմ: Իտալիայում մղվող ազատագրական պայքարի մեջ նա տեսնում էր հայ ժողովրդի, ինչպես նաև Ռուսաստանի մյուս ճնշված ժողովուրդների փրկությունը: Իր նամակներում ու

հողավածներում նա ջերմ տողեր է նվիրել իտալական ազատագրական շարժումներին, մասնավորապես Գարիբալդիին: Կարծիք կա, որ Նալբանդյանը, ոգեշնչված իտալական ազատագրական շարժումներով, իր արևմտահայ համայնահայերի՝ Հ. Սվաճյանի, Ս. Թազվորյանի, Ստ. Ոսկանի և ուրիշների հետ ծրարել էր իտալացիների օրինակով գաղտնի ընկերություններ կազմակերպել և դրանց միջոցով պայքարել սուլթանական Թուրքիայի լծից հայ ժողովրդին ազատագրելու համար: Նալբանդյանի համախոհներից ոմանք անգամ նամակադրական կապեր են ունեցել իտալական շարժման ղեկավարների հետ: Ընթացիկում է, որ Նալբանդյանը նույնիսկ հանդիպում է ունեցել Մաձձինիի հետ:

Իտալիայի ազատագրումը այն աստիճան ոգևորել էր Նալբանդյանին, որ նա 1859 թ. հայտնի ճակատամարտի կապակցությամբ գրեց իր «Իտալացի աղջկա երգը» հայրենասիրական բանաստեղծությունը, որով կոչ էր արվում իտալացիներին՝ խորտակել Ավստրիայի բռնակալությունը և հասնել Իտալիայի ազատությանը: Նալբանդյանի այդ բանաստեղծությունը միաժամանակ մեր կոչ էր հայ ժողովրդին՝ աշատագրվելու թուրքական լծից: Այդ բանաստեղծությունը, որը հետո ժողովրդական երգի վերածվեց, հայ ժողովրդի մեջ լայն տարածում գտած և ամենասիրված երգերից էր:

Իտալական ազատագրական շարժումները ոգևորում էին ինչպես հայ առաջադեմ գործիչներին, այնպես էլ հայ գրողներին և բանաստեղծներին: Հայ բանաստեղծներից շատերը գրում էին հայրենասիրական, ազգային-ազատագրական զաղափարներով տոգորված բանաստեղծություններ, որոնք երգվում էին իտալական հայրենասիրական երգերի եղանակներով, և ժամանակի ընթացքում հայկականացվել են ու մտել հայ ժողովրդական երաժշտության գանձարանը:

Սակայն միայն իտալական ազատագրական-քաղաքական շարժումները չէին, որ ուղիղիսի ջերմ արձագանք գտան հայ ժողովրդի մեջ: Հայ ընթերցող պանդուխտները երկար ժամանակ հոգևոր սնունդ են ստացել այդ շրջանի՝ Ռոստոմ-ճիմենտոյի իտալական գրականությունից: Հայտնի է, որ այդ ժամանակաշրջանի նշանակալից է նաև նրանով, որ անմիջականորեն կապված լինելով ազատագրական պայքարի հետ, ստեղծեց հայրենասիրական հարուստ գրականություն: Երևան եկան մի շարք տաղանդավոր հայրենասեր բանաստեղծներ ու գրողներ, որոնք, բացի ազատագրական շարժումներին ցուցաբերած անձնական մասնակցությունից, գեղարվեստական իրենց ստեղծագործություններով ևս պայքարում էին Իտալիայի ազատագրության համար: Հայրենասեր այդ գրողները համոզված էին, որ Իտալիայի հոգևոր վերածնունդը հնարավոր է միայն նրա քաղաքական վերածնության պայմաններում: Ուստի և նրանք գրականությանը սերտորեն կապում էին քաղաքականության հետ: Իտալական պրականության գլխավոր խնդիրը նրանք համարում էին ժողովրդի մեջ աղբյուրի գիտակցության դաստիարակությունը: Իրենց ստեղծագործություններում դիմելով Իտալիայի պատմությանը, նրանք նպատակ ունեին իր ազատագրության և միասնության համար պայքարող իտալացի ժողովրդին ցույց տալ նրա փառավոր անցյալը, ոգեշնչել նրան նախորդների հերոսական պայքարի օրինակներով³: Ռոստոմ-ճիմենտոյի այդ գրականությունը մեծ ներդրում կատարեց իտալական ազգային-ազատագրական շարժման մեջ:

³ См. «История Италии», т. 2, էջ 494.

Հայ մտավորականությունը անտարբեր չէր կարող մնալ այդ գրականության նկատմամբ: Իտալիային բախտակից Հայաստանում բարենպաստ հող կար իտալական հայրենասիրական, ազգային-ազատագրական բնույթի այդ գրականության տարածման համար: Եվ ահա XIX դարի երկրորդ կեսից սկսած այդ գրականության մեծ մասը թափվեցին Հայերեն, ունենալով շատ վերահրաշարակություններ: Այդ շրջանի իտալացի գրողներից Անտոնիո Յուլիոս Բարիլլին, որ մասնակցել էր 1859 թ. իտալական ազգային-ազատագրական նշանավոր պայքարին, ինչպես նաև 1866 թ. Տիրոլի կռիվներին, իր հայրենասիրական «Շամիրամ» ստեղծագործության համար թեմա էր ընտրել հայ ժողովրդի պատմական անցյալից, հիմք ընդունելով «Արա Գեղեցիկի և Շամիրամի» առասպելը: Այդ վեպը 1870-ական թթ. թարգմանվել է հայերեն և տպագրվել է նախապես «Բաղմավեպ» հանդեսի էջերում՝ «Արա Գեղեցիկ» վերնագրով, իսկ 1876 թ. նույն անունով հրատարակվել է առանձին գրքով, Վենետիկում:

Հայտնի է նույնպես, որ ռուսորջիմենտոյի շրջանում Դանտեի առաջին երկրապագություններից է եղել Հեղու Ֆոսկոլոն, որի հայրենասիրական երազանքի վառ արտահայտություններից մեկը նրա «Տաղ գերեզմանաց» պոեմն է: Այդ պոեմը, որ ոգեշնչել է իտալական հայրենասերների մի քանի սերունդներին, դեռևս 1860-ական թթ. թարգմանվել է և առանձին գրքով հրատարակվել հայերեն, մեծ հաջողություն ունեցավ հայ ընթերցող հասարակության մեջ: «Աստվածային կատակերգության» հեղինակի նման, Ֆոսկոլոն ճանապարհորդում է մեռածների աշխարհ, որտեղ հանդիպում է անցյալի՝ ինչպես անտիկ շրջանի հերոսներին, նույնպես և Իտալիայի հանճարներին, դրանց թվում և Դանտեին: Հեղինակը մտորումներ է անում անցյալի այդ մեծությունների կատարած հերոսական գործերի մասին, դրան հակադրելով իր ժամանակի Իտալիայի սմոթալի և խղճով վիճակը: Անցյալի այդ փառաբանումը, մասնավորապես Դանտեին նվիրված լիրիկական տողերը, խնդրանքալից չէին. դրանք միշտ էին՝ արթնացնելու, խնդրագիտակցության բերելու իր հայրենակիցներին:

Ինչ խոսք, որ հայ ընթերցողը կարգալով այդ պոեմը, ակամայից դուրսահանալից է անցնում Իտալիայի և իր ժողովրդի անցյալի ու ներկայի համամասն վիճակի միջև: Թե ինչպիսի հաջողություն է ունեցել այդ երկի հայերեն թարգմանությունը ժողովրդի մեջ, վկայում է այն փաստը, որ մինչև 1910 թ. եղել են նրա շորս տարբեր թարգմանություններ և հրատարակություններ⁴:

Նույն 1860-ական թթ. Վենետիկում առանձին գրքով, Ղ. Ալիշանի թարգմանությամբ լույս է տեսել Բայրոնի «Չայլդ Հարոլդի» չորրորդ գիրքը, «Իտալիա» վերնագրով: Այդ հռչակավոր երկի 56-րդ և 57-րդ հատվածներում խոսվում է Դանտեի մասին՝ որպես հայրենասերի և մեծ հանճարի: Այդ թարգ-

⁴ «Հուլիոսի Փոսկոլոյ, Յաղագս գերեզմանաց տաղ», թարգմ.՝ հ. Ա. Կ. Բագրատունույն, Վենետիկ, 1864: Նույնը՝ թարգմ. էդ. Հյուրմյուզյան, «Թարգմանություն», 1867, №3 և 4: «Հուլիոսի Փոսկոլոյի և Հիսպոլիտեայ Պինդոնոսի, Կրկին տաղը գերեզմանական», տաղաչափալ յանդաուր ի Հ. Կ. Մըմըրյան, Կ. Պոլիս, 1881: Ուկր. Ֆոսկոլո, Տաղ գերեզմանաց, թարգմ. Հ. Ա. Ղադիկյան, Վենետիկ, 1910 (վերջինս թարգմանված է աշխարհաբար, ղուգահեռ տրված է իտալերեն բնագիրը):

մանությունը մինչև 1890-ական թթ. ունեցել է շորս տպագրություն: Բացի դրանից, նույն թարգմանությունը «Չայլդ Հարուդի» 54—60-րդ հատվածները, «Գերեզմանը հանձնարեղացն յիտալիո» վերնագրով, վերատպվել են և 1880 թ. նորից վենետիկում լույս տեսել «Մաղկաբաղ յստարապգի մատենադրաց» ժողովածուի մեջ, որը անսխալաբար, կրկին հրատարակվել է 1883 թ.:

Իսկ անցյալ դարի 70-ական թթ. հայերեն թարգմանվել են ռիսորջիմենտոյի ականավոր բանաստեղծ Ջ. Լեոպարդիի չափածո ստեղծագործությունները, որոնց հատրտիքը առանձին գրքով լույս է տեսել 1898 թ. վենետիկում: Դանտեի նման, Լեոպարդին նույնպես տառապել է Իտալիայի ազատագրության համար: Նա իր նշանավոր ու հանրահայտ «Ան Իտալիա» բանաստեղծության մեջ պատկերում է իր հայրենիքի թշվառ ու ծանր վիճակը և պատրաստակամություն է հայտնում հանուն հայրենիքի ազատության մեն-մենաէ դուրս գալ թշնամու դեմ և այդ կռվում զոհվելով՝ օրինակ լինել անձնազոհ հայրենասերների համար: Ծիշտ է, հեղինակը բանաստեղծության մեջ Դանտեի անունը չի տալիս, սակայն նրա ներկայությունը, ոգևորիչ շունչը առկա է ստեղծագործության մեջ: Այդ հայրենաշունչ բանաստեղծությունը հայերեն թարգմանվել և տպագրվել է մի քանի անգամ:

Անմիջականորեն Դանտեին նվիրված բանաստեղծության մեջ Լեոպարդին տվել է Դանտեի վիթխարի կերպարը՝ որպես ազատության կրքոտ ջատագովի, տվել է օտար լծի տակ հեծող Իտալիայի ծանր վիճակը, որի ազատության համար նահատակվում են հայրենասեր իտալացիք: Դժոխքից ավելի սարսափելի է Իտալիայի այսօրը, նա անելանելի դրության մեջ է գտնվում, ասում է Լեոպարդին իր այդ բանաստեղծության մեջ, միայն Դանտեի ոգին կարող է փրկել Իտալիան: Լեոպարդիի հայրենասիրական այդ ստեղծագործությունը նույնպես թարգմանվել է հայերեն: Հետագայում նրա բանաստեղծությունների ավելի լիակատար ժողովածուն, Ա. Ղազիկյանի թարգմանությամբ, լույս է տեսել առանձին գրքով վենետիկում, 1910 թ.՝ «Երգեր» վերնագրով:

Ռիսորջիմենտոյի մի այլ ներկայացուցիչ՝ Սիլվիո Փելլիկոյի նշանավոր «Բանտը իմ» երկը, որ նա գրել է ավստրիական բանտում եղած ժամանակ, թարգմանվել է անցյալ դարի 1860-ական թթ. և նույն տասնամյակում ունեցել է երկու առանձին հրատարակություն⁵: Այդ երկը իր հերթին մոտ է եղել հայ ժողովրդի սրտին, քանի որ նրանում խոսվում է Իտալիայի հայրենասերների մասին, որոնք սոսկալի տանջանքների ու դաժանությունների էին ենթարկվում ավստրիացիների կողմից: Փելլիկոյի այդ նշանավոր երկի թարգմանիչը, Կեստանդնուպոլսում հրատարակվող «Մասիս» պարբերականի խմբագիր Կ. Ս. Յուլյուսյանը, առաջաբանում ասում է, որ հայրենասիրության կենդանի նահատակ Սիլվիո Փելլիկոյի այդ երկը, հեղինակի տասնամյա բանտարկության պատմությունն է, որը վաղուց պետք է թարգմանվեր հայերեն:

Սիլվիո Փելլիկոյի մեկ այլ գործը՝ «Ֆրանչեսկա դա Ռիմինի» ողբերգությունը, որը գրված էր դանտեական սյուժեով և մոտ էր ինչպես իտալացու, նույնպես և հայի սրտին (քանզի հեղինակը ողբերգության հերոս Պաոլոյի, լերանով հայրենիքի ազատության ու անկախության կոչ էր անում), նույն 1860-ական թթ. հայ հանդիսատեսի ուշադրությանն է արժանանում: Այդ ող-

⁵ Ս. Բ. Լ. Ի. Բ. Բանտը իմ: Թարգմ. Կարապետ Ս. Յուլյուսյան, Կ. Պոլիս, 1862, 562 էջ: Նույնը՝ Կ. Պոլիս, 1867, 345 էջ:

բերդության անտիպ թարգմանությունը, հայ ինքնուրույն հայրենասիրական «Արշակ Բ», «Սանդուխտ» և այլ ողբերգությունների հետ միասին, բաղմիցս բեռնադրվել է տարբեր վայրերում գտնվող հայկական թատրոններում և ունեցել է նշանակալից հաջողություն⁶։ Հետագայում «Ֆրանչեսկա դա Ռիմինիս» ողբերգությունը մեկ այլ թարգմանությամբ հրատարակվել է առանձին գրքով *Խեֆլիսում*։

1863 թ. Փեղիկոյի ծննդավայր Սալուցցո քաղաքում մեծ հայրենասերի հիշատակին արձան կանգնեցվեց։ Այդ կապակցությամբ «Բաղմավեպ» հանդեսը ջերմ հոգված է տպագրել, զետեղելով նաև հուշարձանի նկարը⁷։ Տարակույս չկա, ասված է հոգվածում, որ Բտալիայի միության ու ազատագրության գործը գլխավորապես արդյունք է իր քաջասիրտ հայրենասերների անձնվիրություն, որոնց շարքին է պատկանում և Սիլվիո Փեղիկոն։ Նա իր ողբերգական երկասիրություններով և այլ գրվածքներով աշխատում էր վառ պահել սերը հայրենիքի նկատմամբ։ Միանալով ազատասեր և արիասիրտ լուսարդացիներին, նա կուլում էր ավստրիացիներին Իտալիայից դուրս վռնդելու համար։ Հուշարձանի բացման հանդեսը միայն տեղական բնույթ չունի։ մեծ հայրենասերին իրենց սերն ու երախտագիտությունը ցուցաբերելու համար հանդեսին մասնակցելու էին եկել Իտալիայի բոլոր կողմերից, դրանց թվում և ազատասեր օտարազգիներ։

Իսեռ 1850-ական թթ. հայերեն է թարգմանվել և առանձին գրքով հրատարակվել Դանտեի ստեղծագործությունը նոր տեսանկյունով մեկնաբանող-ներից մեկը՝ Վիլենցո Մոնտիի հայրենասիրական մոտիվներով գրած «Արիստոդիմ» ողբերգությունը⁸ (որի հիման վրա, ինչպես հայտնի է, գրվել և իտալական թատրոններում բեմադրվել է «Արջենե» օպերան)։ Դրա հայ թարգմանիչն «Արիստոդիմ» ողբերգությունը համարել է «անմահական ստեղծագործություն»։ Դրանից առանձին հատվածներ հետագայում տպագրվել են տարբեր ժողովածուներում։ Այդ ողբերգությունը 1860-ական թթ. նույնպես բեմադրվել է հայ բեմում։

Հայ ժողովրդի հայրենասիրական զգացմունքները արթնացնելու և խորացնելու գործում նշանակալից է եղել Ալեսանդրո Մանձոնիի «նշանվածները» հուշակալոր վեպի հայերեն թարգմանությունը։ Բանաստեղծ, դրամատուրգ և վիպասան Ալեսանդրո Մանձոնին XIX դարի իտալական ռոմանտիզմի խոշորագույն ներկայացուցիչն էր։ Նրա ստեղծագործական կյանքը համընկավ ռիսորջիմենտոյի բուռն դարաշրջանին, երբ իտալական ժողովուրդը դաժան պայքար էր մղում ավստրիական լծի դեմ։ Նա իր ստեղծագործություններում կոչ էր անում ժամանակակիցներին՝ պայքարել Իտալիայի ազատության համար, երազում էր տեսնել Իտալիան միացյալ ու անկախ։ Մանձոնիի որոշ բանաստեղծությունների, ինչպես նաև նրա «Ատելզիզ» թատերգության մի հատվածի հայերեն թարգմանությունները տպագրվել են հայ պարբերական մամուլում ու ժողովածուներում դեռևս 1860-ական թթ. «նշանվածները» վեպը, իրը ոչ

⁶ Տե՛ս Կ. Ս տ ե փ ա ն յ ա ն, Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հատ. 1, Երևան, 1962, էջ 233։

⁷ Տե՛ս «Հիշատակարան Սիլվիո Փեղիկոյի և Սալուցցո», «Բաղմավեպ», Վենետիկ, 1875, 19279—281։

⁸ «Արիստոդիմ», ողբերգություն Վ. Մոնթիի, թարգմ. Ա. Մ. Պահատրյան, Կ. Պոլիս, 1853, 89 էջ։

միայն իտալական, այլև համաշխարհային գրականության գլուխ-գործոցներից մեկն է, անդյալ դարի 70-ական թթ. սկսած ունեցել է երեք առանձին հայերեն հրատարակություն, քանի որ այն համահնչուն է եղել հայ ժողովրդի իդեալին ու նպատակներին:

Վերևում բնութագրված երկերով չի սպառվում իտալական հայրենասիրական գրականությունից կատարված թարգմանությունների ցանկը: Մենք խոսեցինք կարևորագույն ստեղծագործությունների մասին միայն: Իտալական ուսորջիմենտուի դարաշրջանում ստեղծված հայրենասիրական, ազատասիրական գրականությունը, որի առաջացման գործում իտալական հայրենասեր գրողների իդեալը եղել է Դանտե-հայրենասերը, իր ժամանակին գաղափարական լիցք է տվել և հայ ժողովրդին, որը, ինչպես վերը նշեցինք, բախտակից էր Իտալիային:

Թարգմանական այդ գրականությունը, ինչպես նաև ինքնուրույն հայրենասիրական հայ գրականության առաջացումն ու զարգացումը որոշակի դեր կատարեցին հայ ժողովրդի ազատագրական պայքարում:

ИТАЛЬЯНСКОЕ ОСВОБОДИТЕЛЬНОЕ ДВИЖЕНИЕ И АРМЯНЕ

А. С. БАБАЯН

(Р е з ю м е)

Эпоха Рисорджименто возродила интерес к А. Данте, в гражданских мотивах творчества которого привлекала выдвинутая им впервые идея объединения и освобождения Италии. Эта идея продолжала играть роль вдохновляющей силы в освободительном движении вплоть до 70-х годов прошлого столетия — времени завершения борьбы за возрождение Италии.

Еще в 50-х годах XIX в. борьба итальянского народа против австрийского ига приняла общенациональный характер. Армянская общественность с сочувствием относилась к этой борьбе, а такие прогрессивные армянские деятели, как М. Налбандян, расценивали борьбу итальянского народа как единственный путь освобождения угнетенных народов, в частности и армянского народа.

В Армении, разделявшей судьбы угнетенной Италии, переводились и издавались произведения, создававшиеся итальянскими писателями эпохи Рисорджименто. Начиная с 60-х годов несколько раз печатались на армянском языке поэма У. Фосколо «Гробницы», произведения С. Пеллико, А. Мадзини и других писателей. Благодаря этому прогрессивная литература эпохи Рисорджименто сыграла определенную роль в армянской национальной литературе, вдохновившей национально-освободительную борьбу.